ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1968 թ. հունվար—հունիս)

ԲՈՒԼԳԱՐԻԱ

Հունվարի 28-ին Շումենում հայկական «Շիրվանզադե» թատերախումբը հաջողությամբ ներկայացրել է Շիրվանզադեի «Քաոս»-ը։ Ներկայացման ռեժիսյորն է Ի. Իվանովը։

«Երևան», 9 փետրվարի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Բուդապեշտում նշվել է Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակը։

Փետրվարի 20-ին «Գրականության բեմ» սրահում հունգարացիների կողմից կազմակերպված երեկոն նվիրված է եղել Հայաստանին, նրա մշակույթին ու գրականությանը։ Միաժամանակ որոշում է ընդունված Բուդապեշտի համալսարանի լեզվաբանության և գրականության սրահում կազմակերպել հայոց լեզվին և գրականությանը նվիրված դասախոսություններ, որոնք կարդալու է Պալ Սալմաշին։

«Զարթոնք», 19 մայիսի

ՌՈՒՄԻՆԻԱ.

Բուխարեստում լույս տեսնող ռումիներեն պարբերականներից մեկում տպագրվել է Նարեկացու կյանքին և ստեղծագործությանը նվիրված մի ուսումնասիրություն և «Մատյան ողբերգության» պոեմի որոշ հատվածների թարգմանություններ։ Թարգմանությունը կատարել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն։

Ռումինացի ընթերցողը այս թարգմանությամբ առաջին անգամ է ծանոթանում միջնադարյան հայ հանճարեղ բանաստեղծի հետ։

«Աշխարհ», 27 մարտի

* * *

Վերջերս Բուխարեստում լույս է տեսել 60 էջից բաղկացած մի գրքույկ, ուր տեղավորված են հայկական հեքիաթներ ռումիներեն թարգմանությամբ, 114, 140 տպաքանակով։ Գրքույկը նկարազարդել է Մ. Փոսան։

«Նոր կյանք», 17 մարտի

ԱՄՍ

Կահիրեի հայ մշակութային ակումբների նախաձեռնությամբ փետրվարի 14-ին կազմակերպվել է վաստակավոր դերասանուհի տիկին Արաքսի Օհանյանի թատերական գործունեության քառասնամյա հորելյանը։ Հորելյանական նիստին նախագահել է Եգիպտոսի փոխվարչապետ և մշակույթի նախարար Սարուաթ Օքաշան։

«Աշխարհ», 13 փետրվարի

* * *

Ալեքսանդրիայի Սեն Ֆրանսուա Կսավիե սրահում նշվել է Վենետիկի Մխիթարյան միաբանության հաստատման 250-ամյակը։

«Աշխարհ», 23 մարտի

* * *

Մարտի 27-ին Կահիրեի Գեղարվեստասիրաց Միության սրահում միության վարչության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայ գրականության նշանավոր դեմքերից մեկին՝ Բենիամին Նուրիկյանին նվիրված մեծարանքի երեկո։ Նրա կողմից հրատարակվող «Նոր դիր» ամսաթերթը երկար տարիներ մեծ դեր է կատարել սփյուռքահայության համար։

«Աշխարհ», 20 ապրիլի

* * *

Ֆրանսահայ տաղանդավոր նկարիչ Գառզուի ցուցահանդեսը բացվել է Կահիրեի Ազգային Գալուստյան վարժարանի ցուցասրահում։ Ներկայացված են մեծանուն արվեստագետի քառասուն վիմատիպ նկարները։

«Արարատ», 1 հունիսի

ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութի Հ. Ե. Ը. Զարեհ-Նուպար ակումբում հունիսի 25-ին տեղի է ունեցել երեկո՝ նվիրված Վահրամ Փափազյանի հիշատակին։ Լավեցին զեկուցումներ Վահրամ Փափազյանի կյանքի ու գործունեության մասին։ Գեղարվեստական բաժնում հատվածներ կարդացվեցին Փափազյանի «Հետադարձ հայացք» և «Իմ Օթելլոն» գրքերից։

«Արարատ», 28 հունիսի

ՍԻՐԻԱ

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Հալեպում արար նշանավոր գրող Նիզար Խալիլի թարգմանությամբ լույս է տեսել «Մի կաթիլ մեղրը», որը գեղարվեստորեն ձևավորել է գեղանկարիչ Սարգիս Քեշիշյանը, պատկերազարդել է նկարիչ Լ. Խանամիրյանը։

«Գրական թերթ», 29 մարտի

ԵԹՈՎՊԻԱ

Ադիս-Աբեբայի «Արարատ» մարմնամարզական միության հրավերով այստեղ համերգ է տվել եգիպտահայ անվանի երգիչ և դերասան Գրիգոր Փարթամյանը։

Դաղութի այս տարվա մի այլ ձեռնարկն է եղել Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի «Զարշըլը Արթին աղա» կատակերգության բեմադրությունը։

«Սևան», 15 մայիսի

ԻՐԱՆ

Իսպահանի համալսարանի հայագիտական բաժնում, որը հիմնվել է 1960 թ., սովորում են մոտ վեց տասնյակ հայ երիտասարդներ։ Համալսարանը հայագետ ուսուցիչներ է պատրաստում հայկական դպրոցների համար։

«Զարթոնք», 25 հունիսի

ԻՐԱՔ

Բաղդադի «Ալ Շաաբ» հանդիսասրահում հունվարի 14-ին համերգ է տվել տիկին Արփինե Փեհլիվանյանը։ Նա կատարել է Մոցարտի, Բելլինիի, ինչպես նաև Կոմիտասի, Ալեմշահի, Կանաչյանի, Մեհրապի, Տիգրանյանի ստեղծագործություններից։ Համերգը անցել է հաջողությամբ։

«Աշխարհ», 13 փետրվարի

ԹՈՒՐՔԻԱ

Ֆրանսահայ տաղանդավոր դաշնակահար Բաֆֆի Պետրոսյանը հունվարի 21-ին Ստամբուլում հայ սանուց միության համար համերգ է տվել։

«Աշխարհ», 7 փետրվարի

* * *

Ստամբուլում մարտի 6-ին հաջողությամբ համերգ է տվել ամերիկահայ տաղանդավոր երգչուհի Ժակլին Շահպազյանը։ Համերգի ծրագրում տեղ են գտել ինչպես եվրոպական դասական կոմպոզիտորների, այնպես էլ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները։

«Աշխարհ», 27 մարտի

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսահայ «Աշխարհ» շաբաթաթերթը սկսել է հրատարակել «Աշխարհ գրական» հավելվածը, որը լույս է տեսնում ամիսը մեկ անգամ և նվիրված է գրականության ու արվեստի հարցերին։

«Պայքար», Ստամբուլ, 8 փետրվարի

* * *

Նկարիչ Սարգիս Զապունյանը (ծնված 1938 թ.) Փարիզի միջազգային ցուցահանդեսում ստացել է առաջին մրցանակներից մեկը։

«Զարթոնք», 24 փետրվարի

* * *

Հայաստանից վերադառնալուց հետո Փարիզում ներկայումս իր կտավներն է ցուցադրում ֆրանսահայ նկարիչ Զարեհ Մութաֆյանը։ Այդ 46 կտավները ներկայացնում են հայաստանյան տեսարաններ։

«Զարթոնք», 7 մարտի

* * *

Մարտի 15—23-ը Փարիզի 20-րդ թաղամասի «Երիտասարդների և մշակույթի տան» և ֆրանսահայ երիտասարդների միության (ԺԱՖ) Փարիզի մասնաճյուղի նախաձեռնությամբ կազմակերպվել է հայ մշակույթին նվիրված տասնօրյակ, որի հիմնական նպատակն է ֆրանսիացի հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդի պատմության գլխավոր իրադարձություններին։

Մարտի 15-ին տեղի է ունեցել տասնօրյակի հանդիսավոր բացումը։ Ցուցահանդեսում ներկայացված են V—VII և IX—XI դարերի հայ ճարտարապետական նշանավոր կոթողները, Սովետական Հայաստանի ճարտարապետության ներկա աճը, ինչպես նաև Արտավազդ Պերպերյանի կողմից պատրաստված բացատրական ցուցատախտակներ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության և մշակույթի գլխավոր փուլերին։ Ցուցադրված են նաև հայերեն ու ֆրանսերեն գրքեր հայ մանրանկարչության, ճարտարապետության և գրականության վերաբերյալ։

Բացման նիստին ելույթ է ունեցել հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին։

«Աշխարհ», 16 մարտի

* * *

Փարիզի հայ արվեստագետները ստեղծել են Թորոս Ռոսլինի անվան ընկերություն, որն իր շուրջն է համախմբել մոտ երեսուն գեղանկարիչների, քանդակագործների, ճարտարապետների, լուսանկարիչների։

Ընկերության անդրանիկ նիստը տեղի է ունեցել փետրվարի 15-ին, որին մասնակցել են ընկերության անդամներ Գառզուն, Դարիա Կամսարականը, Բ. Թոփալյանը, Արտավազդ Պերպերյանը, Ռ. Ժերանյանը, Ե. Յութուջյանը և ուրիշներ։

Ընկերությունը նպատակ ունի դառնալ մշակույթի այնպիսի օջախ, որը ոչ միայն պետք է համախմբի հայ արվեստագետներին, այլև ամրապնդի կապը սփյուռքի գլխավոր կենտրոնների արվեստագետների և մանավանդ հայրենիքի արվեստագետների միջև։

Միության ատենապետն է գեղանկարիչ Ժորժ Հակոբյանը։

«Պայքար», 23 մարտի

* * *

Մարտի 23-ին Շան զ'Էլիզեում տեղի է ունեցել Ռաֆֆի Պետրոսյանի համերգը Իլ դը Ֆրանս նշանավոր նվագախմբի ընկերակցությամբ։ Կատարվել են Պրոկոֆևի երրորդ դաշնամուրային կոնցերտը և Շոպենի նոկտյուրնը։ Համերգն անցել է մեծ հաջողությամբ։

«Աշխարհ», 10 ապրիլի

* * *

Փարիզի գեղարվեստից բարձրագույն վարժարանի դասախոս, ճարտարապետ Էդուարդ Յուբյուճյանը լույս է ընծայել «Հայկական հուշակոթողները չորրորդեն մինչև տասնյոթերորդ դարը» աշխատությունը։

Աշխատության մեջ վեր է հանված հայ ճարտարապետության դերը բյուզանդական ճարտարապետության ծագման մեջ։

«Պայքար», 11 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Փետրվարի 21-ին Վենետիկի «Նայլ հոլ» սրահում նշվել է Ս. Ղազարի Մխիթարյան վանքի հիմնադրման 250-ամյակը։

«Ջահակիր», 29 փետրվարի

* * *

Լիբանանահայ բարիտոն Տիգրան Ժամկոչյանը ապրիլի 16-ին Միլանի Մամուլի տան ակումբում հանդես է եկել ճոխ համերգով, բաղկացած դասական և հայկական երաժշտությունից։

Համերգից առաջ իտալահայերի միության նախագահ Ստեփան Սրապյանը զեկուցում է կարդացել հայ մշակույթի և երաժշտության մասին։

«Աշխարհ», 20 ապրիլի

* * *

Հռոմում ամեն տարի տեղի է ունենում բյուզանդական ու արևելյան եկեղեցական և ժողովրդական երաժշտության միջազգային համագումար։

Այս տարի համագումարի կազմակերպիչները ոչոշել են Իտալիայի ժողովրդին ներկայացնել հայկական եկեղեցական և ժողովրդական երաժշտություն, որը և մայիսի 10-ին հաղորդվեց Հռոմի ազգային ռադիոկայանով։

Հռոմի Լևոնյան ժառանգավորաց վարժարանի ուսանողները մեծ հաջողությամբ կատարեցին հայկական եկեղեցական երգեր ու շարականներ և հայկական ժողովրդական ու արդի երգեր։

«Արարատ», 20 մայիսի

ԱՎՍՏՐԻԱ

Փետրվարին մահացել է Վիեննայի Մխիթարյան միաբանության հնագույն անդամ Համազասպ Ոսկյանը։ Նա հեղինակ է բազմաթիվ արժեքավոր աշխատությունների։ Ներսես Ակինյանի մահվանից հետո խմբագրել է «Հանդես ամսօրյան»։ Նա Վիեննայի համալսարանի դոկտորի աստիճան էր ստացել։

«Աշխարհ», 23 մարտի

* * *

Վիեննայում ներկայումս ապրում են մոտ 250 հայեր։ Գաղութն ունի ազգային-եկեղեցական մարմին։ Սովորում են 40 ուսանողներ, որոնցից 37-ը՝ Իրանից։ Ուսանողները գերմաներեն հոդվածներ են տպագրում «Նոյե ցայտ» թերթում, կազմակերպում դասախոսություններ Հայաստանի մասին և այլն։

«Ջահակիր», 23 մայիսի

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Շվեյցարիայի հայոց միության նախաձեռնությամբ նշվել է հայ մամուլի գործիչ Լևոն Թութունճյանի հիսնամյակը։ Լոզանի թերթերը հոդվածներ են տպագրել Լ. Թութունճյանի հիսնամյակի կապակցությամբ։

«Աշխարհ», 10 ապրիլի

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի Սլոն վարժարանի սրահում փետրվարի 24-ին տեղի է ունեցել հայկական ժողովրդական երգերի համերգ՝ Երջանիկ Միսիրյանի ղեկավարությամբ։

«Արև», 11 ապրիլի

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո մի քանի հայ ընտանիքներ են հաստատվում Կարակասում, որով հիմք է դրվում Վենեսուելայի հայկական գաղութին։ Հետագայում աստիճանաբար ավելանում է հայ բնակչության թիվը։ 1967 թ. բացվում է Ազգային Արարատ տունը։ այնուհետև՝ հայկական շաբաթօրյա դպրոց երեխաների համար։ Ստեղծվել են Հայ տիկնանց միություն և Հայ երիտասարդաց միություն։ Կազմակերպվել են երգի-պարի և թատերական խմբեր։

«Պայքար», Ստամբուլ, 8 փետրվարի

ԿԱՆԱԴԱ

Փետրվարի 18-ից սկսած Մոնրեալի ռադիոն ամեն կիրակի օր կանոնավոր հաղորդումներ է տալու հայերեն լեզվով։

«Ջահակիր», 22 փետրվարի

* * *

Հռչակավոր ջութակահար Ժիրայր Գանթարճյանը Նյու-Յորքից հրավիրվել է Կանադա որպես Տորոնտոյի նշանավոր սիմֆոնիկ նվագախմբի մենակատար և առաջին ջութակ։ Կանադայի կենտրոնական թերթերը դրվատական հոդվածներ են տպագրել անվանի ջութակահարի մասին։ Տորոնտոյի «Նյուս» թերթը գրում է. «Ժիրայր Գանթարճյան կամ կախարդական մատներ»։ Նույն թերթը Գանթարճյանի ներկայությունը նվագախմբում համարում է «ամենեն նշանակալից երևույթը նվագախմբի պատմության մեջ»։

«Պայքար», 29 փետրվարի

* * *

Տորոնտոյի հայկական գաղութը բաղկացած է 3000 մարդուց։ Գաղութում գործում է Սահակ-Մեսրոպ ազգային վարժարանը, կիրակնօրյա դպրոցը, երիտասարդական և այլ միություններ։

«Աշխարհ», 27 հունվարի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Բուենոս-Այրեսում 16 տարի է, ինչ գոյություն ունի «Հայ համալսարանականներու միություն»։ Միությունը կազմակերպել է հայերենի դասընթացներ, որոնց հաճախում են 50—60 ուսանողներ, հաճախ կազմակերպվում են հավաքույթներ, հրապարակային դասախոսություններ, ցուցահանդեսներ, որտեղ ներկայացվում են հայ նկարիչների գործերը։ Հիմնված է գրավաճառանոց։ Ամեն ամիս հրատարակվում է իսպաներեն լեզվով տեղեկատու լրաբեր, որում արձագանք է գտնում միության գործունեությունը։ Վերջերս այդ թերթը («Կաճառը») հրատարակվում է նաև հայերեն լեզվով։

«Նոր օր», 29 մարտի

ԱՄՆ

1967 թ. սկսել է գործել Նյու-Յորքի Մայր տաճարին կից մշակութային տունը, որտեղ մեծ հաջողությամբ համերգ են տվել Լիլի Զուգասբզյանը, Փաթրիշիա Միքայելյանը և Հերի Զառացյանի լարային քառյակը։ Միաժամանակ կանոնավոր գործել են Լոս-Անջելոսում երկու և Ֆիլադելֆիայում մեկ դպրոցները։

«Աշխարհ», 7 փետրվարի

* * *

Հարվարդի համալսարանի հայագիտական համազգային միությունը ունի 3000 անդամներ։ Միության նպատակն է «ոչ միայն հայուն, այլ նաև օտարին ծանոթացնել հայ լեզուն և անցյալի փառավոր պատմությունը», հաստատելով հայագիտական օջախներ, գրատներ, կազմակերպելով դասախոսություններ և հրատարակելով հայագիտական գրքեր։

Հարվարդի տպարանը այս տարի հրատարակում է անգլերեն լեզվով հայ պատմագիտական երեք հատորներ։

Միությունը կապ է պահպանում Հայաստանի մշակութային կենտրոնների հետ։

«Շարժում», 23 մարտի

* * *

Բոստոնցի երիտասարդ բանաստեղծ Հրանդ Պոնճուքճյանը շահել է այս տարվա բանաստեղծության առաջին մրցանակը։ Ամերիկայի 50 նահանգներից 2500 հոգի մասնակցել են այս մրցանակաբաշխությանը, սակայն առաջին մրցանակին է արժանացել Հ. Պոնճուքճյանի «Կանգառ» խորագրով քերթվածը։

«Աշխարհ», 26 հունիսի

* * *

Կալիֆորնիայի համալսարանի հայ ուսանողները կազմել են մի միություն, «որուն նպատակն է համալսարանական շրջաններուն ծանոթացնել հայ մշակույթն ու արվեստը»։

Իսլամական արվեստի հեղինակավոր մասնագետ, գերմանացի պրոֆ. Օտտո Տորնը դասախոսություն է կարդացել պրոֆեսորների և ուսանողների համար «Հայ ճարտարապետության ազդեցությունը իսլամական ճարտարապետության վրա» թեմայով։ Նա մասնավորապես կանգ է առել Վանի շրջանի ճարտարապետական կոթողների վրա, հիացմունքով է արտահայտվել Աղթամարի ճարտարապետական արվեստի մասին, հայտարարելով, որ «Աղթամարի հնությունները գոհարներ են»։

«Աշխարհ», 29 հունիսի

* * *

«Պայքարին» տիկին Ռոզ Աքկյուլյանի կողմից ուղարկած մի նկարի առթիվ այդ թերթում կարդում ենք. «Միշտ գաղտնիք մը մնացած էր, թե ինչ պայմաններու տակ Գոլոմպիո (Հարավային Ամերիկա) քաղաքներեն մեկը մը կըրտված էր Արմենիա»։ Պատմական տեղեկությունները հարցին պատասխանում են այսպես. «Արմենիա ներկայիս Քուինտիո նահանգի մայրաքաղաքն է։ Անոր նախորդ անունն էր Վիլլա տը Հոլկուին։ Սակայն այդ քաղաքի հիմնադիրներու յանձնախումբը քիչ ետք փոխեց Արմենիայի, ի յիշատակ թուրքերուն կողմէ քաղաքական ու կրօնական նպատակներով սպաննուած 200.000 հայերուն»։

«Պայքար», 2 մայիսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ.